

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի
 «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող
 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին»
 № 483-Ն որոշման 4-րդ կետի կատարման վերաբերյալ

| NN ը/կ | Գործողությունը | Կատարման ընթացքը | Գործողության կատարման վերստուգելի չափանիշը | Պատասխանատու մարմինը և համակատարողները | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը |
|-----------|---|--|---|--|---------------------|---------------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 59 | <p>«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի շրջանակում անցկացվող մրցույթ՝ սայլակով տեղաշարժվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքների համար</p> | <p>Մրցույթի եզրափակիչ փուլն անցկացվել է 2018 թվականի հուլիսի 23-28-ը Կոտայքի մարզի Ծաղկաձորի գիսավոր մարզահամալիրում: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը և Երևանի քաղաքապետարանը միջոցառման մասնակից ընտանիքի կազմում հաշմանդամություն ունեցող բոլոր ընտանիքներին ապահովել են մարզահագուստով, իսկ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը հոգացել է ճանապարհածախսը և կեցության ծախսերը: Մասնակիցները պարգևատրվել են Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության վկայագրերով, դրամական մրցանակներով, հուշանվերներով, ինչպես նաև</p> | <p>Մասնակցել են Հայաստանի Հանրապետության 10 մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության սայլակով տեղաշարժվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց 23 ընտանիքներ՝ թվով 69 մարդ: Մրցույթն անցկացվել է 6 մրցաձևերից՝ խաղային փոխանցավազք (30 մ), վարժություն բասկետբոլի գնդակով, խաղային փոխանցավազք թենիսի գնդակներով, խաղային փոխանցավազք (80 մ), օղակներով նետումներ նշանակետին, «Հավաքիր «ՀԱՂԹԱՆԱԿ» բառը»:</p> | <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> | 2018 թ. | ՀՀ պետական բյուջե |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|--|----------------|--------------------------|
| | <p>«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում</p> | <p>ընտանիքների երեխաներին հանձնվել են նվերներ:</p> <p>Առաջին փուլն անցկացվել է Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում: Առաջին փուլի արդյունքներով ձևավորվել է ՀՀ մարզերի և Երևան քաղաքի երկրորդ փուլի մասնակիցների կազմը: Երկրորդ՝ եզրափակիչ փուլը անցկացվել է օգոստոսի 28-31-ը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում: Մրցույթին մասնակցել են լողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ և մտավոր սահմանափակումներ ունեցող անձինք: Մրցույթի մասնակիցները պարզևատրվել են Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի վկայագրերով, մեդալներով, գավաթներով և դրամական մրցանակներով:</p> | <p>Մրցույթն անցկացվել է 2 փուլով 7 մարզաձևերից՝ բասկետբոլ, սեղանի թենիս, շախմատ, բազկամարտ, շաշկի, դարթս, եռամարտ մտավոր սահմանափակումներ ունեցող անձանց համար և եռամարտ լողական խնդիրներ ունեցող անձանց համար: Առաջին փուլին մասնակցել է շուրջ 300 մարդ: Երկրորդ՝ եզրափակիչ փուլին մասնակցել է 192 մարդ:</p> | <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն</p> <p>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> | <p>2018 թ.</p> | <p>ՀՀ պետական բյուջե</p> |
| | <p>«Հարավային Կորեայի Փյոն Չան քաղաքում կայացած ձմեռային պարաօլիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության</p> | <p>Մարտի 9-18-ը Հարավային Կորեայի Փյոն Չան քաղաքում կայացած ձմեռային պարաօլիմպիկ խաղերին, ըստ կազմակերպության ներկայացրած հաշվետվության, դահուկավազք մարզաձևում (1 կմ սպրինտ) հանդես եկած մարզիկը 36 մասնակիցներից գրավել է 33-րդ տեղը:</p> | <p>Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ներկայացված է եղել մեկ մարզիկով (պատվիրակության կազմը՝ 5 հոգի):</p> | <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> <p>«Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպություն</p> | <p>2018 թ.</p> | <p>ՀՀ պետական բյուջե</p> |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|--|--|--|--|-------------------------------|---|
| | <p>մասնակցության ապահովում»</p> <p>«Խուլերի շախմատի Հայաստանի Հանրապետության 13-րդ առաջնության անցկացում»</p> <p>«Կույր շախմատիստների տղամարդկանց Հայաստանի Հանրապետության անհատական եզրափակիչ առաջնության անցկացում»</p> | <p>Անցկացվել է մայիսի 14-16-ը Երևանում: Ըստ կազմակերպության ներկայացրած հաշվետվության՝ առաջնության հաղթողներն են՝</p> <p>1-ին տեղ - Սարգիս Աթաբեկյան, ք. Վանաձոր,</p> <p>2-րդ տեղ - Սարո Մելքոնյան, ք. Երևան,</p> <p>3-րդ տեղ - Հակոբ Հակոբյան, ք. Երևան:</p> <p>Անցկացվել է հունիսի 21-ից հուլիսի 4-ը Երևանում: Մասնակցել են ՀՀ մարզերի և Երևան քաղաքը ներկայացնող կույր շախմատիստներ: Ըստ կազմակերպության ներկայացրած հաշվետվության՝ մրցումների կանոնակարգի համաձայն առաջնությանը մասնակցել են 2017 թվականի շախմատի առաջնությունում 1-ինից 5-րդ տեղերը գրաված կույր շախմատիստները, ինչպես նաև մարզերում և Երևանում անցկացված առաջնություններում հաղթած առաջին և երկրորդ խմբի շախմատիստները: Նմանատիպ մոտեցումը իր դրական արդյունքներն է տալիս տեսողական խնդիրներ ունեցող անձանց ինքնադրսևորման և</p> | <p>Մասնակցել են Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 27 խուլ շախմատիստներ:</p> <p>Մասնակցել են առաջին և երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող 14 կույր շախմատիստներ, ընդամենը՝ 22 մարդ (մրցավարական հանձնաժողով և 8 ուղեկցորդ):</p> | <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն»</p> <p>«Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպություն</p> <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն»</p> <p>«Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպություն</p> | <p>2018 թ.</p> <p>2018 թ.</p> | <p>ՀՀ պետական բյուջե</p> <p>ՀՀ պետական բյուջե</p> |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|--|---|---|--|----------------|--------------------------|
| | <p>«Հաշմանդամների հանրապետական մարզական 16-րդ փառատոնի անցկացում»</p> | <p>հասարակության մեջ լիարժեք ինտեգրման գործընթացում, ինչպես նաև խթանում է մարզաձևի զարգացման շարունակականությունը:</p> <p>Անցկացվել է հուլիսի 11-13-ը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում, Ըստ կազմակերպության ներկայացրած հաշվետվության մասնակիցները՝ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հաշմանդամություն ունեցող մարզիկներ են Մրցանակային տեղեր գրաված մարզիկները պարզևատրվել են ոսկե, արծաթե և բրոնզե մեդալներով, հավաստագրերով և դրամական մրցանակներով (1-ին տեղ՝ 10.000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 7000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 5000 ՀՀ դրամ):</p> | <p>120 մարզիկներ իրենց ուժերը չափել են 7 մարզաձևերում՝ սեղանի թենիս, անվասայլակներով բասկետբոլ, լող, բազկամարտ, ծանրամարտ, շախմատ և շոու դաուն:</p> | <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> <p>«Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպություն</p> | <p>2018 թ.</p> | <p>ՀՀ պետական բյուջե</p> |
| | <p>«Ուրախ խաղեր» էստաֆետային մրցման անցկացում»</p> | <p>Անցկացվել է հոկտեմբերի 19-ին Երևանում: Կազմակերպության ներկայացրած հաշվետվության համաձայն մրցումներին մասնակցել են Երևան քաղաքի №№ 6, 11, 12 հատուկ դպրոցների և №№ 20, 27, 33, 150, 162 հիմնական դպրոցների մտավոր սահմանափակումներ ունեցող և առանց հաշմանդամության աշակերտներ: 1-ինից 3-րդ տեղերը գրաված թիմերը պարզևատրվել են</p> | <p>Յուրաքանչյուր թիմ ներկայացրել է 12-15 տարեկան մարզիկների: Մրցումներին մասնակցել է 80 աշակերտ:</p> | <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն»</p> <p>«Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություն</p> | <p>2018 թ.</p> | <p>ՀՀ պետական բյուջե</p> |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|--|--|--|--|
| | <p>«Համաեվրոպական ֆուտբոլի շաբաթ» ծրագրով ֆուտբոլի հանրապետական առաջնության անցկացում»</p> <p>Հովանավորչական միջոցներով անցկացվող միջոցառումներ</p> <p>«Սպորտլանդիա» մարզական խաղերի անցկացում Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթահամալիրում</p> | <p>մեդալներով և հավաստագրերով, 4-5-րդ տեղերը գրաված թիմերը՝ հավաստագրերով:</p> <p>Անցկացվել է հոկտեմբերի 25-ին Երևանում: Կազմակերպության ներկայացրած հաշվետվության համաձայն առաջնությանը մասնակցել են Արթիկի N° 1 հատուկ դպրոցի, Երևան քաղաքի N°N°6, 12 հատուկ դպրոցների և N°N° 20, 27 դպրոցների աշակերտներ: 1-ինից 3-րդ տեղերը գրաված թիմերը պարգևատրվել են մեդալներով: Բոլոր մասնակիցներին և սպասարկող անձնակազմին տրվել է կազմակերպության համապատասխան հավաստագիր:</p> <p>Հունիսի 27-ին «Փրկություն» հաշմանդամ երեխաների կենտրոնում անցկացվել է ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում:</p> <p>Սեպտեմբերի 25-ին հատուկ կրթահամալիրի մարզադահլիճում անցկացվել է ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում:</p> | <p>Յուրաքանչյուր թիմ ներկայացրել է 12-15 տարեկան մարզիկների: Մրցումներին մասնակցել են մտավոր սահմանափակումներ ունեցող 50 աշակերտներ:</p> <p>Միջոցառմանը մասնակցել են մտավոր խնդիրներ ունեցող 50 սաներ:</p> <p>Մարզական խաղերին մասնակցել են լսողության խանգարումներ ունեցող 30 երեխաներ:</p> | <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> <p>«Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություն</p> <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> <p>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</p> | <p>2018 թ.</p> <p>2018 թ.</p> <p>2018 թ.</p> | <p>ՀՀ պետական բյուջե</p> <p>Ֆինանսական միջոցներ չեն պահանջվել:</p> <p>Ֆինանսական միջոցներ չեն պահանջվել:</p> |